«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ *Արժեքային համակարգի ձևավորումը տարրական դասարաններում*

Հետազոտող ուսուցիչ՝ Արմենուհի Դավթյան

Դպրոց՝ «Քարակերտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

Արմավիր 2022

Բովանդակություն

Ներածություն…… 3

Գրականության ակնարկ…… 5

Սովորողների արժեքային համակարգի զարգացումը դասավանդման ընթացքում.. 8

Արժեհամակարգի ուսուցման մեթոդներ …….. 13

Եզրակացություն…… 20

Գրականության ցանկ …… 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ինքներս պետք է հավատանք այն ամենին,
ինչ սովորեցնում ենք մեր երեխաներին:
/Վուդրո Վիլսոն/

Մանկավարժական գիտության մեջ արժեքային համակարգ հասկացությունը ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը: Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն երկկողմանի բնույթ ունի՝ այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը, և այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը: Աշակերտների մեջ արժեքային կողմնորոշոմների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի արժեքների յուրացմանը միտված գործունեությունը: Տարրական դպրոցում ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումն իրականանում են դրանց համակարգման հիման վրա:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի

պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Արժեքային համակարգի զարգացման արդիականությունը կայանում է նրանում, որ աշակերտների մոտ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները վերածվում են համզմունքների և կարողությունների:

Այսպիսով արժեքները հարմարեցնում ենք կրթության բովանդակությանը և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը: Մշակված է նաև տարրական կրթության բովանդակության յուրահատկության և կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: Այս մոտեցումն առավելագույնս արտահայտում է մեր կողմից քննարկվող հիմնախնդրի առանձնահատկությունները:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակությունը բնութագրվում է միասնական խնդիրների լուծմամբ: Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ արժեքային կողմնորոշումների ձևավորման առումով այնպիսին են, որ հնարավորություն չեն ընձեռում տարրական դպրոցի ուսումնական գործընթացում ներառել բոլոր արժեքները. Այստեղ առաջնային նշանակություն են ձեռք բերում նրանց հասկացողությանն ու հոգեբանությանը մատչելի, արդիական արժեքները: Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակության մեջ, պետք է արտացոլվեն այնպիսի արժեքներ, որոնք ընտրված են տարրական դասարաններում ուսուցման գործառույթների և նրանց ուսուցման նպատակների հարաբերակցության հիման վրա, հաշվի առնելով սովորողների արժեքակողմնորոշիչ և տարիքային առանձնահատկությունները:

Դպրոցի դերն այսօր մատաղ սերնդին տրամադրելն է ոչ միայն ճանաչողական ոլորտում ավանդական գիտելիքներով և հմտություններով, այլև խաղաղության մշակույթի, մարդկային փոխհարաբերությունների մշակույթի վերաբերյալ արժեքային պատկերացումների ձևավորման գործում: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Գրականության ակնարկ

Երեխաների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք տարժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերի մոտ և միացել այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Արժերի երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել:

Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Նորերը տարբեր են քաղաքում և գյուղում: էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:

Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար նա պետք է զգա և՝ ցավ, և՝ ուրախություն ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները:

Ուսուցչի ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական

միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ըստ Ալպորտի՝ «Արժեքը համոզմունք է, որի հիման վրա մարդը գործում է ըստ նախապատվության»:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը:

Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն է և կազմավորվել է նրա հենքի վրա: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին:

Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս նախադպրոցական տարիքը երեխայի կյանքում առանձնահատուկ շրջում է, որը պատմականորեն աչքի է ընկել վերջին

ժամանակներում: Այն առավել խորը և բովանդակալից ներկայացված է ֆիզիոլոգների, ուսուցիչների և հոգեբանների աշխատություններում Դ. Բ. Էլկոնին, Վ. Վ. Դավիդով, Լ. Ի. Այդարովա, Ա. Կ. Դուշավիցկի, Ա. Կ. Մարկովա, Յու, առաջատար Տարրական դպրոցի աշակերտները 6 (7) - 10 տարեկան երեխաներ են, որոնք սովորում են ժամանակակից հայերեն տարրական դպրոցի I - IV դասարաններում: Սա համեմատաբար հանգիստ և նույնիսկ ֆիզիկական զարգացման տարիք է: Դպրոց գնալը մեծ փոփոխություն է առաջացնում երեխայի կյանքում: Նրա կյանքի ողջ ուղին, սոցիալական դիրքը թիմում, ընտանիքում կտրուկ փոխվում է: Հիմնական, այժմ գործունեությունը ուսուցումն է, ամենակարևոր պարտականությունը սովորելու, գիտելիք ձեռք բերելու պարտականությունն է: Իսկ սովորելը լուրջ աշխատանք է, որը պահանջում է երեխայի կազմակերպվածություն, կարգապահություն և կամային ուժ: Այո, դա այդպես է, քանի որ երեխայի դպրոց գալով, ինչպես գրել է Դ. Բ. Էլկոնինը, իրականության հետ երեխայի փոխհարաբերությունների ամբողջ համակարգը վերակազմավորվում է: Դպրոցում, ըստ Դ. Բ. Էլկոնինի, այս հարաբերությունների նոր կառուցվածք է առաջանում: «Երեխա-մեծ» համակարգը տարբերակված է. «Երեխա-ուսուցիչ» համակարգը սկսում է որոշել երեխայի հարաբերությունները ծնողների և երեխայի հարաբերությունները երեխաների հետ: Առաջին բանը, որ մեծահասակները հարցնում են երեխային.

«Ինչպե՞ս ես սովորում»: «Երեխա-ուսուցիչ» համակարգը դառնում է երեխայի կյանքի կենտրոնը, դրանից է կախված կյանքի բոլոր բարենպաստ պայմանների ամբողջությունը շատ կարևոր է նաև ծնողների վերաբերմունքը երեխայի գործունեությանը, որը կենտրոնական տեղ է գրավել նրա կյանքում:

Առաջին դասարանցիները իրենց դեռ չեն զգում մեկ թիմի անդամ, նրանք մեկուսացված են և անկախ միմյանցից, եսակենտրոն: Իհարկե, կրտսեր երեխաների մոտ ուսման նկատմամբ ճիշտ վերաբերմունքը անմիջապես չի ձևավորվում: Նրանք դեռ չեն հասկանում, թե ինչու պետք է սովորել: Բայց շուտով պարզվում է, որ ուսուցումը աշխատանք է, որը պահանջում է ուժեղ կամքի ուժեր, ուշադրության մոբիլիզացիա, ինտելեկտուալ ակտիվություն և զսպվածություն: Եթե երեխան սովոր չէ սրան, ուրեմն հիասթափվում է, ուսման նկատմամբ բացասական վերաբերմունք է առաջանում: Որպեսզի դա տեղի չունենա, ուսուցիչը պետք է երեխային ներշնչի այն միտքը, որ ուսուցումը ոչ թե տոն է, ոչ խաղ, այլ լուրջ, քրտնաջան աշխատանք, բայց շատ հետաքրքիր, քանի որ դա քեզ թույլ կտա շատ նոր բան սովորել, զվարճալի, կարևոր, անհրաժեշտ բաներ. Կարևոր է, որ հենց ուսումնական աշխատանքի կազմակերպումն ամրապնդի ուսուցչի խոսքերը:

Կրթական գործունեությունը մարդկության կողմից կուտակված մտավոր և հոգևոր հարստության յուրացմանն անմիջականորեն ուղղված գործունեություն է: Ուսումնական գործունեությունը ավարտված ձևով չի տրվում: Երբ երեխան գալիս է դպրոց, նա դեռ այնտեղ չէ: Ուսումնական գործունեությունը պետք է ձևավորվի. Տարրական դպրոցի խնդիրը կրթական գործունեության կառուցման մեջ է. առաջին հերթին երեխային պետք է սովորեցնել սովորել: Առաջին դժվարությունը կայանում է նրանում, որ այն շարժառիթը, որով երեխան գալիս է դպրոց, կապված չէ այն գործունեության բովանդակության հետ, որը նա պետք է կատարի դպրոցում:

Ուսուցման գործընթացը պետք է կառուցվի այնպես, որ դրա շարժառիթը կապված լինի առարկայի ձուլման սեփական, ներքին բովանդակության հետ: Թեև սոցիալապես անհրաժեշտ գործունեության շարժառիթը մնում է որպես ընդհանուր դրդապատճառ, այն բովանդակությունը, որը երեխային սովորեցնում են դպրոցում, պետք է խրախուսի ուսումը, Դ.Բ. էլկոնին Պետք է ձևավորել ճանաչողական մոտիվացիա: Նման ճանաչողական մոտիվացիայի ձևավորումը չափազանց սերտորեն կապված է դասավանդման բովանդակության և մեթոդների հետ: Իրական մոտիվացիան տեղի կունենա այն ժամանակ, երբ կրթության բովանդակությունը կներգրավվի դեպի դպրոց:

Ուսումնական գործունեությունը բնութագրվում է իր առարկայով.

Ուսումնական գործունեության մեջ ամենակարևորը մարդուն ինքն իրեն դարձնելն է, այսինքն արտացոլումը: Այդ իսկ պատճառով ցանկացած կրթական գործունեություն սկսվում է նրանից, որ երեխան գնահատվում է, իսկ նշանը գործում է որպես գնահատման որոշակի ձև: Գնահատման միջոցով մեկը ճանաչվում է որպես փոփոխության առարկա:

Ուսումնական գործունեության բովանդակության նկատմամբ հետաքրքրության ձևավորումը, գիտելիքների ձեռքբերումը կապված է կրտսեր Պակսենոների փորձի հետ իրենց ձեռքբերումներից բավարարվածության զգացումով: Եվ այս զգացումն ամրապնդվում է ուսուցչի հավանությամբ, գովասանքով, ով ընդգծում է ամեն, նույնիսկ ամենափոքր հաջողությունը, ամենափոքր առաջընթացը: Ավելի երիտասարդ աշակերտները հպարտության զգացում են ապրում, ուժի հատուկ վերելք, երբ ուսուցիչը գովաբանում է նրանց:

Ուսուցչի դաստիարակչական մեծ ազդեցությունը կրտսեր աշակերտների վրա պայմանավորված է նրանով, որ ուսուցիչը երեխաների դպրոցում մնալու հենց սկզբից դառնում է անվիճելի հեղինակություն նրանց համար: Ուսուցչի հեղինակությունը ցածր դասարաններում դասավանդելու և դաստիարակելու ամենակարեւոր նախապայմանն է: Այս տարիքը անհատականության բավականին

նկատելի ձևավորման տարիքն է: Այն բնութագրվում է մեծահասակների և հասակակիցների հետ նոր հարաբերություններով, թիմերի մի ամբողջ համակարգում ընդգրկվածությամբ, նոր տեսակի գործունեության մեջ ներառված՝ ուսուցում, որը աշակերտին մի շարք լուրջ պահանջներ է դնում: Այս ամենը վճռականորեն ազդում է մարդկանց, թիմի, ուսուցման և հարակից պարտականությունների հետ հարաբերությունների նոր համակարգի ձևավորման և ամրապնդման վրա, ձևավորում է բնավորություն, կամք, ընդլայնում է հետաքրքրությունների շրջանակը, զարգացնում կարողությունները:

Կրտսեր դպրոցականների մոտ դրվում է բարոյական վարքագծի հիմքը, տեղի է ունենում բարոյական նորմերի ու վարքի կանոնների յուրացում, սկսում է ձևավորվել անհատի սոցիալական ուղղվածությունը:

Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում եմ, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Ճիշտ է, այսօր մենք մի քիչ շփոթված ենք, որովհետև աշխատանքը համարժեք չի գնահատվում: Բայց միևնույն է, մեզնից յուրաքանչյուրը իր աշխատանքը պետք է պատշաճ կատարի: Մանկավարժը, ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայեն, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Ոչինչ, որ նրանք երբեմն ժամանակակից լինելու համար երևութական պատմուճաններ են հագնում, երբեմն աղավաղում են որոշ ազգային արժեքներ, երբեմն էլ աղավաղված հայերենով են խոսում: Նրանց զգալի մասը տառապում է օտարամոլությամբ: Երբ ներքին հարստություն ձեռք բերեն, նրանք կհասկանան իրենց սխալը, և դա անպայման կուղղվի: Եվ բոլորը չէ, որ ի վիճակի են դա անել: Մենք նրանց պետք է ուղղորդելով, առաջնորդելով սովորեցնենք:

Բարոյական վակում չի լինում, եթե որոշ արժեքներ կորցրել ենք, փոխարենը ուրիշարժեքներով պետք է դաստիարակենք, իսկ դա պետք է մենք անենք, մենք բոլորս համատեղ՝ ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, բուհը, բանակը: Գարեգին Նժդեհն ասում էր՝ «Տո՜ւր հայ մորը թեկուզ քիչ բան, բայց պահանջիր ամեն ինչ, և նա կանի: Տո՜ւր այսօրվա երիտասարդությանը գեղեցիկի, լուսավորի ու վսեմի օրինակներ, վաղը նրա շնորհիվ մենք կունենանք մեր երազած հայրենիքը»:

Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը աշակերտներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական

համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը: Կրթակարգով ամրագրվեց ապագա շրջանավարտի կատարելատիպը, որն ավելի շատ արժեքային համակարգի չափանիշներ էր պարունակում Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր աշակերտի համար անձնարին կշանակություն առանա, անհրաժեշտ է որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտո խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի ուրաքանուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ Արժեքային կողմնորոշումն երեխայի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է նրա առցիալականության ցուցանիշը: Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը: Այդ իսկ պատճառով դպրոցի դերն այսօր մատաղ սերնդին տրամադրելն է ոչ միայն ճանաչողական ոլորտում ավանդական գիտելիքներով և հմտություններով, այն խաղաղության մշակույթի մարդկային փոխհարաբերությունների մշակութի վերաբերյալ արժեքային պատկերացումների ձևավորման գործում:

Ժամանակակից հասարակության մեջ հիմնական խնդիրներից մեկը «կրթության կողմնորոշումն է ոչ միայն աշակերտների կողմից որոշակի քանակությամբ գիտելիքների յուրացմանը, այլև նրանց անձի զարգացմանը»:

Աշխատելով 6-10 տարեկան դպրոցականների հնարավորություններ ունի կողմնորոշելու անհատականությունը դեպի բարոյական արժեքները: Այս ընթացքում հիմք է դրվում աշակերտի անձնական որակների ձևավորմանը, ձևավորվում են նրա շրջապատող աշխարհի և իր իմացության մեխանիզմները:

Այնուամենայնիվ, դպրոցական կրթության պրակտիկան ցույց է տալիս, որ կրտսեր դպրոցականներին բարոյական արժեքների կողմնորոշելու աշխատանքը կատարվում է գիտելիքների, հմտությունների և կարողությունների հիման վրա: Ներկա իրավիճակին այլընտրանք պետք է լինի կրտսեր աշակերտների նպատակաուղղված, համակարգված կողմնորոշումը դեպի բարոյական արժեքները, որը անցնում է ուսուցչի կամ հասակակիցների հետ: Արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական գաղափարը ոչ թե ուսման և դաստիարակության գործընթացում աշակերտին բարոյական իդեալներ պարտադրելն է, այլ պայմաններ ստեղծելը, որպեսզի նա առաջնորդվի հասարակության արժեքներով, դրանք անցկացնի իր միջով և գործել գիտելիքներին և համոզմունքներին համապատասխան:

ԱՐԺԵՔԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Արժեքներ սերմանելու խնդիրը հեշտ գործ չէ: Աշակերտների և երեխաների մեջ արժեքների պահպանման որոշ մեթոդներ և ռազմավարություններ են

1. Դրամատիզացում
2. Պատմություն
3. Անձնական օրինակներ
4. Դերախաղեր
5. Խմբային երգեցողություն
6. Արժեքի պարզաբանում
7. Անեկդոտներ
8. Հարցադրում
9. Խմբային գործունեություն
10. էքսկուրսիաներ

1) Դրամատիզացիա

Այսօրվա ավելի ու ավելի բևեռացված և անհանդուրժող մշակույթում ուրիշների շարժառիթներն ու ընտրությունները հասկանալու կարողությունը կարևոր է:

-Դրամատիզացիան օգնում է գլոբալ պատասխանատու քաղաքացիների ձևավորմանը: Դրամատիկան միանգամից մի քանի նպատակ է իրականացնում՝ հարստացնելով աշակերտների դպրոցական փորձը արվեստի միջոցով, ինչպես նաև ամրապնդելով ավանդական գիտնականներին: Դրամատիկան օգտագործվել ցանկացած առարկայի ակտիվ ուսուցման խթանման համար՝ ինչպես կարող է նաև թեմայի ինտելեկտուալ ըմբռնում տալու համար: Պատմության դրամատիզացումը նույնացվում է որպես արտահայտիչ արվեստներից մեկը, որը վերաբերում է երեխաների ներքին երևակայական մտքին և ստեղծագործական ձևերով նրանց ինքնաբուխ գործողություններին Դասարանում դրամատիզացիայի օգտագործումը կխթանի դրամատիկական իրազեկությունը ճշմարիտ և ազնիվ գործելու կարևորության մասին՝ օգնելով գիտակցել, թե ինչպես է մեր վարքագիծը ազդում ուրիշների վրա:

Փոքր երեխաների արտահայտչականության մեջ դրամատիզացումն է՝

- Ինքնաբուխ,
- Իմպրովիզացված

- Ստեղծագործական ներկայացում:

-Մեր օրերում դրամատիկական արվեստը կարևոր միջոց է ստեղծարարությունը խթանելու խնդիրների լուծման գործում:

- Դրամատիկ հետազոտությունը կարող է աշակերտներին հնարավորություն տալ հույզերի, մտքերի և երազանքների համար, քանի որ նրանք այլ արտահայտելու միջոցներ չունեին: Այն կարող է մարտահրավեր նետել աշակերտների պատկերացումներին իրենց աշխարհի և իրենց մասին:

2) Պատմություն

Մեծ հերոսների կյանքի մասին պատմությունները կբորբոքեն հետազոտության ոգին և կխթանեն բարձրագույն իդեալներն ու մարդկային արժեքների ըմբռնումը:

Պատմելը և՛ արվեստ է, և՛ գիտություն:

-Արդյունավետ օգտագործման դեպքում այս տեխնիկան ունի բոլոր արժեքները սերմանելու մեծ ներուժ: Պատմության հիմնական նպատակը մարդու ոգու բարձրացումն է և ներքին տեսլականի ձևավորումը, որը մարդուն ստիպում է վերջապես գիտակցել իր իրական եսը և կյանքում որոշակի արժեքներ սերմանել: Պատմությունները միշտ համարվել են արժեքների վրա հիմնված կարևոր հաղորդագրություն ստանալու լավագույն միջոցը:

Այս փորձառությունները ծառայում են մարդկանց ոգեշնչելու նպատակին՝ հատկապես սթրեսի և կոնֆլիկտների ժամանակ նրանց տրամադրությունը բարձրացնելու համար և կարող են նոր ուղղություն հաղորդել մարդու կյանքին: Բարձրաստիճան մարդկանց կյանքի պատմություններն ու օրինակները կարող են ներառել այն շեշտը, որ մեծությունը ձեռք է բերվում ոչ թե հանկարծակի, այլ համբերության, հաստատակամության և պրակտիկայի միջոցով:

• Ծնողների և ուսուցիչների կողմից նման պատմությունների պատմումը առավել արդյունավետ է հատկապես կրտսեր դասարաններում: Պատմելը հզոր տեխնիկա է, քանի որ այն հավերժ տպավորություն է թողնում երեխաների մտքերի վրա:

3) Անձնական օրինակներ

Անձնական օրինակները օգնում են աշակերտներին խորացնել փոխըմբռնումը, մոտիվացիան և պատասխանատվությունը՝ կապված անձնական և սոցիալական ընտրությունների հետ.

Ոգեշնչել անհատներին ընտրել իրենց անձնական, սոցիալական, բարոյական և հոգևոր արժեքները և տեղյակ լինել դրանց զարգացման և խորացման գործնական մեթոդներին:

4) Դերային խաղի մեթոդի առավելությունները

Աշակերտները սովորաբար հաճույք են ստանում այլ անձանց դեր խաղալուց: Այս տեխնիկան հիմնականում սոցիալ-դրամա տեխնիկա է: Այն ապահովում է արժեքների ընդգծման իդեալական կարգավորում: Դերախաղերն օգտագործվում են որպես արժեքներ սերմանելու մեթոդոլոգիա, որտեղ շեշտը դրվում է ոչ թե դերասանական կարողությունների, այլ գաղափարների կամ արժեքների նախագծման և դրանց վերլուծության վրա: Վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչու մարդը պետք է կամ չպետք է ընդունի խնդրո առարկա արժեքը և գործի բոլոր դեպքերում՝ պահպանելով նույնը: Ըստ Կ.Հ. Հուվերի (1976), դերախաղն ունի հետևյալ առավելությունները.

ա. Տեխնիկան սովորողին տալիս է նոր պատկերացումներ սոցիալական իրավիճակներին հնարավոր արձագանքների վերաբերյալ:

բ. Դրամատիզացված իրավիճակի վերլուծությունը շեշտում է գործոնները, որոնք նպաստում են իրական զգացողությունների ռեակցիաներին:

գ. Ընտրված իրավիճակների իրականացումը արժեքավոր հնարավորություն է տալիս իրական զգացողությունների արձագանքների քննարկման համար:

դ. Դերախաղերը կարող են անցկացվել ըստ տարիքային խմբերի:

ե. Դեր խաղալու տեխնիկան համատեղում է դերասանական հաճույքը սովորելու հետ.

զ. Ուրիշի ստվերում կարճ ժամանակ ապրելը զգալի հնարավորություն է տալիս ուրիշի զգացմունքների մասին պատկերացում կազմելու համար:

Գործելու գործընթացը օգնում է ավելի լավ հասկանալ և ամրապնդել արժեքների կարևորությունը: Իրական կյանքում հաճախ թաքնված զգացմունքներն ի հայտ են գալիս դերակատարման ժամանակ:

5) Խմբային երգեցողություն

Խումբը նշանակում է միասնություն՝ ուղղված ընդհանուր նպատակի կամ համագործակցության, կարգապահության, ինքնազսպման և հարմարվելու ոգու: Խմբային երգելը կարևոր է, քանի որ երգի բառերի արժեքները մնում են գիտակցության մեջ երկար ժամանակ.

Երգի ընտրությունը կարևոր է. Սրանք կարող են ընտրվել՝ արտացոլելու լավ մտքերն ու զգացմունքները՝ սեր բնության նկատմամբ, համընդհանուր սեր, հայրենիք, հարգանք սեփական ժառանգության և ուրիշի մշակույթի նկատմամբ:

6. Արժեքի պարզաբանում

Արժեքների պարզաբանումը աշակերտներին խրախուսելու տեխնիկա է, որպեսզի նրանք փոխկապակցեն իրենց մտքերն ու զգացմունքները և դրանով իսկ հարստացնեն իրենց սեփական արժեքների գիտակցումը: Քանի որ արժեքները որոշումների և գործողությունների մեծ մասի շարժիչ ուժն են, դասարանի գործունեությունը պետք է կենտրոնանա աշակերտներին ներգրավելու վրա:

7) Անեկդոտներ

Անեկդոտները, ինչպիսիք են պատմությունները, ներկայացնում են տարբեր տեսակետներ կյանքի որոշակի իրավիճակների վերաբերյալ, տարբեր ձևեր, որոնցով կարելի է զգալ և հասկանալ այն, ինչ կարևոր է իր կյանքում:
Անեկդոտները իրական կյանքի փորձառությունների պատմություններ են, որոնք ներկայացնում են իրական մարդկային զգացմունքներն ու արտահայտությունները: Դա կարող է լինել մի իրադարձություն, որը երկարատև տպավորություն է ստեղծում մարդու մտքում, դիպչում է սրտի առանցքը և կարող է փոխել կյանքի ընթացքը:

Անեկդոտներն օգնում են՝

- Օգտագործողի համար հարմար ձևով հարցի փոխանցումը,
- Հասկանալ հարցը՝ դարձնելով վերացական, կոնկրետ և հեշտ ընկալելի,
- Մոտիվացնել և ոգեշնչել մարդկանց արտացոլելու,
- Խորը մտածեք իրավիճակների մասին:

8) Հարցում

Հարցադրումը ավանդական դասարանային ուսուցման մեջ սովորաբար օգտագործվող մեթոդներից մեկն է՝ աշակետների կողմից սովորած գիտելիքները ստուգելու ըմբռնելու համար: Հարցադրելը արվեստ և հմտություն է: Դրա նպատակն է՝

- բարձրացնել աշակերտների հետաքրքրասիրությունը և ակտիվ ուսուցման մեջ ներգրավվածություն առաջացնել: Դասարանում ուսուցիչների կողմից տրվող հարցերի մեծ մասը նրանք են, որոնց պատասխանը աշակերտները արդեն գիտեն:

- Բաց հարցերը հազվադեպ են օգտագործվում Բաց հարցև աշակերտներին հնարավորություն է տալիս բացահայտելու խնդիրները նայելու կամ մտածելու նոր ուղիներ:

9) Խմբային գործունեություն

Խմբային գործունեությունը հնարավորություն է տալիս միաժամանակ սովորելու բազմաթիվ արժեքներ: Կարևոր է սիրո, հանդուրժողականության, համագործակցության, խաղաղ համակեցության, ուրիշների նկատմամբ հարգանքի հիմնարար արժեքների զարգացումը:

Խմբերում աշխատելով աշակերտները սովորում են միմյանց անկեղծ ջանքերի արժեքը, ամբողջ խմբի բարօրության համար լավագույնն անելու ուրախությունը: Դերային խաղերը, խմբային քննարկումները, խմբային նախագծերը և այլն խմբային գործունեության մի մասն են, որոնք կարող են օգտագործվել նաև դասավանդման առարկաներում: Կարևոր է, թե ինչպես են բովանդակալից կազմակերպվում նման միջոցառումները:

Արժեքների կրթության հիմնական հետևանքը մտածելու ժամանակ տալն է:

10. Էքսկուրսիաներ

Դպրոցական էքսկուրսիաների ընթացքում, շնորհիվ ուսուցչի և բանիմաց զբոսավարի, երեխաները լավագույնս կբացահաղտեն և կճանաչեն Հայաստանի ամենատարբեր և հետաքրքիր տեսարժան վայրերը, պատմամշակութային կենտրոնները: Եվ ահա որպես գործիք օգտագործեցի էքսկուրսիան դեպի Խոր Վիրապ:

Քանի որ աշակերտներն որպես թեմա անցել էին և արդեն նախնական տեղեկություններ ունեին Հայաստանում Քրիստոնեության ընդունման, նրա տարածման մասին, ուստի որպեսզի ավելի ամրապնդվի և դառնա աշակերտի սեփականը, ուսուցման գործիք ընտրեցի էքսկուրսիան դեպի Խոր Վիրապ, որպես

միջոց հայրենաճանաչությունն ու հայրենասիրությունը: Աշակերտներն արդեն գիտեին, որ Հայաստանն առաջին պետությունն է աշխարհում, որն ընդունել է քրիստոնեություն և այն հռչակվել է որպես պետական կրոն 301թ Տրդատ Գ Մեծ թագավորի օրոք: Տրդատ Գ Մեծը և Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեություն ճանաչելով որպես պետական կրոն փորձել են լուծել պետության ամբողջականության, ազգային ինքնության պահպանման ու ամրապնդման, ազգի բոլոր հատվածների համախմբման ու միասնության խնդիրը: Գրիգոր Լուսավորիչը եկեղեցական, քաղաքական գործիչ, Հայոց եպիսկոպոսապետ է 302 թվականից: Ըստ ավանդության Գր. Լուսավորիչը վերցնելով Հայոց արքայի թուրը օրհնել է, նետել է վեր աստվածային զորությամբ, սուրը խաչանման կախվել է Սեպուհ լեռան վրա, և Լուսավորչի կանթեղի լույսով ողողված, լույս է տալիս այնտեղից:

Հայ եկեղեցին Գր. Լուսավորչին դասել է ավագ սրբերի կարգը: Գր. Լուսավորչի հիշատակին նվիրված տոներն Վիրապ մտնելը և չարչարանքները, Վիրապից ելնելը, նշխարհների գյուտը:

Վանական համալիր հասնելուց հետո մեր առջև բացվեց գեղեցիկ տեսարան, իր ողջ հմայքով ու գեղեցկությամբ երևում էր Արարատ լեռը:Արարատով հիանալուց հետո երեխաները մտան վանական համալիր, այնուհետև մտան այն փոսը, որտեղ տասնչորս տարի բանտարկված ապրել էր Լուսավորիչը: Երեխաները տպավորված իրենց տեսածով, ամեն մեկը յուրովի փորձում էր մեկնաբանել իր տեսածն ու

իմացածը: Աշակերտներս տպավորված ու ոգևորված, հպարտության մեծ զգացումով վերադարձան տուն:

Դպրոցներում աշխատանքը չափից շատ զբաղված է, կատաղի աշխատանք, որը կարող է արդյունավետ լինել կամ ոչ: Ինչպե՞ս է հնարավոր դա անել արդեն իսկ գերծանրաբեռնված դպրոցական գրաֆիկում: Սա դպրոցի որոշելիքն է և առաջնահերթությունը:

Ամեն դեպքում, կարևոր կետը, որը պետք է հիշել, այն է, որ ցանկացած տեսակի գործունեությանը պետք է հետևի որոշակի փորձառության արտացոլումը: Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր պահան ուսումնական առարկաները: Դպրոցում սովորողները տարրական դասարաններից սկսած ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին:

Արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ.:
2. Իլյինսկի, Ռուսաստանի կրթության արդիականացումը համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հանդես, N1, էջ 50-83, Երևան, 2014 թ.
3. Մանասյան Ն. , Հանրակրթության արժեքային համակարգը», «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15:
4. Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Բաբանսկի Յու. Կ..Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ. 112 էջ:
5. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
6. Սուխոմլինսկի Վ. Ա. . Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:
7. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:
8. Վարդումյան Ս. , Հարությունյան Լ., Ձաղինյան Ն. Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Տեսություններ, մեթոդներ, գնահատում:
9. Маслов С.И. Эмоционально - ценностное образование младших школьников /С.И . МасловТула , Изд - во ТГПУ им . Л.Н. Толстого , 1999. - 130 с . / 53.
10. https://www.vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf
11. https://www.pupilstutor.com/2021/12/methods-of-teaching-value-education.html
12. https://works.doklad.ru/view/fRy-dUHq8io/all.html